## *1.2 Արտադրություն (ծառայություններ)*

### *1.2.1. Արդյունաբերություն*

*Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը:* 2002թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում, ըստ 1815 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 339836.4 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 347100.8 մլն դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 36462.6 մլն դրամի, այլ երկրներում՝ 84968.4 մլն դրամի արտադրանք:

2001թ. հունվար–դեկտեմբերի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 114.2%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էներգետիկայի՝ 124.2%:

**Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 2000թ. դեկտեմբերի նկատմամբ**




**Արդյունաբերական արտադրանքի դինամիկան**

*(%-ով)*

| | Նախորդ ամսվա նկատմամբ | Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ | Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ |
|---|---|---|---|
| 2001 թ. | | | |
| հունվար | 78.5 | 116.5 | 78.5 |
| փետրվար | 95.0 | 106.0 | 74.6 |
| մարտ | 105.9 | 103.4 | 79.0 |
| ապրիլ | 89.9 | 103.2 | 71.0 |
| մայիս | 98.9 | 90.7 | 70.2 |
| հունիս | 103.2 | 95.7 | 72.4 |
| հուլիս | 108.5 | 93.1 | 78.6 |
| օգոստոս | 107.1 | 105.4 | 84.2 |
| սեպտեմբեր | 104.7 | 113.8 | 88.2 |
| հոկտեմբեր | 84.9 | 98.8 | 74.9 |
| նոյեմբեր | 106.7 | 98.5 | 79.9 |
| դեկտեմբեր | 132.1 | 125.8 | 105.5 |
| 2002 թ. | | | |
| հունվար | 71.7 | 107.1 | 71.7 |
| փետրվար | 100.9 | 104.5 | 72.3 |
| մարտ | 116.4 | 116.9 | 84.2 |
| ապրիլ | 88.1 | 115.6 | 74.2 |
| մայիս | 95.2 | 107.3 | 70.6 |
| հունիս | 103.7 | 115.8 | 73.2 |

| | Նախորդ ամսվա նկատմամբ | Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ | Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ |
|---|---|---|---|
| հուլիս | 114.4 | 104.6 | 83.7 |
| օգոստոս | 96.0 | 96.1 | 80.4 |
| սեպտեմբեր | 102.7 | 116.1 | 82.6 |
| հոկտեմբեր | 108.3 | 137.4 | 89.5 |
| նոյեմբեր | 94.8 | 123.7 | 84.8 |
| դեկտեմբեր | 127.1 | 100.3 | 107.8 |

## Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների[1]

| | Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով[2], մլն դրամ | Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով[2], մլն դրամ | 2002թ. հունվար-դեկտեմբերին, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2001թ. հունվար–դեկտեմբերի նկատմամբ (համադրելի գներով), % |
|---|---|---|---|
| **Ամբողջ արդյունաբերությունը** | **339836.4** | **347100.8** | **114.2** |
| *այդ թվում`* | | | |
| էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում | 82995.6 | 82995.6 | 85.6 |
| հանքագործական արդյունաբերություն | 30208.3 | 29594.8 | 116.8 |
| մշակող արդյունաբերություն | 226632.5 | 234510.4 | 125.0 |
| *որից`* | | | |
| սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն | 121279.9 | 121906.7 | 107.0 |
| ծխախոտային արտադրատեսակների արտադրություն | 10609.7 | 11151.8 | 155.6 |
| մանածագործական արտադրություն | 1652.9 | 1595.0 | 107.1 |
| հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում | 2098.0 | 2094.0 | 91.2 |
| կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրություն | 372.5 | 349.8 | 121.1 |
| բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն | 1733.9 | 1784.2 | 124.7 |
| քիմիական արդյունաբերություն | 7239.4 | 6587.6 | 79.3 |
| ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն | 697.6 | 745.6 | 116.6 |
| այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն | 10770.8 | 10674.0 | 135.3 |
| մետաղագործական արդյունաբերություն | 30616.1 | 32263.2 | 123.5 |
| պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն | 2754.0 | 2577.2 | 140.9 |
| մեքենաների և սարքավորանքի արտադրություն | 4468.3 | 5385.4 | 69.4 |
| ոսկերչական արտադրատեսակների արտադրություն | 20505.9 | 25071.9 | 182.7 |
| գործունեության այլ տեսակներ | 11833.5 | 12324.0 | 95.4 |

## Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ

*[1] Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):*

*[2] Հաշվարկված են առանց ավելացված և ակցիզային հարկերի:*

արտադրության բաժինների, 2002թ. հունվար – դեկտեմբերին




Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում




Հանքագործական արդյունաբերություն







2002թ .հո ... ադրանքի ծավալի 102.1%-ը: Նշվ ... ված արտադրանքի ծավալների հս ... կան տեսակների, բնութագրվում է

## Իրացված արտադրանքը թողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ,%-ով




## Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ հանրապետության մարզերի, 2002թ. հունվար-դեկտեմբերին

| | Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով, մլն. դրամ | Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն. դրամ | 2002թ. հունվար-դեկտեմբերին արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2001թ. հունվար–դեկտեմբերի նկատմամբ (համադրելի գներով), % |
|---|---|---|---|
| **Ընդամենը ՀՀ** | **339836.4** | **347100.8** | **114.2** |
| *այդ թվում`* | | | |
| ք. Երևան | 159177.4 | 161785.1 | 106.9 |
| Արագածոտն | 4999.1 | 4799.4 | 167.3 |
| Արարատ | 32089.6 | 34699.9 | 126.7 |
| Արմավիր | 24127.2 | 24396.3 | 110.8 |
| Գեղարքունիք | 8501.8 | 8641.8 | 161.9 |
| Լոռի | 16544.5 | 16696.9 | 99.5 |
| Կոտայք | 47751.4 | 50324.0 | 123.9 |
| Շիրակ | 10812.4 | 10564.5 | 109.9 |
| Սյունիք | 29378.4 | 28666.9 | 106.9 |
| Վայոց ձոր | 3192.0 | 3276.0 | 93.0 |
| Տավուշ | 3262.6 | 3250.0 | 111.8 |

2002թ. հունվար–դեկտեմբերին 2001թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ հանրապետության 9 մարզերի արդյունաբերական կազմակերպություններում արձանագրվել է արդյունաբերական արտադրության աճ, որը ներկայացվում է ստորև ըստ մարզերի և արտադրությունների.

*-Երևան քաղաքում`* 6.9% (հիմնականում ի հաշիվ ադամանդների (2.8 անգամ), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (167.4%), ծխախոտային (159.9%), պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության (156.5%), մետաղագործական արդյունաբերության (132.6%), էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի (113.1%) և սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրության (108.0%),

*-Արագածոտնի մարզում* 67.3% (հիմնականում ի հաշիվ ադամանդների (9.2 անգամ), հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (6.4 անգամ) և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության (2.7 անգամ)),

*-Գեղարքունիքի մարզում`* 61.9% (գրեթե ամբողջությամբ ի հաշիվ օգտակար հանածոների արդյունահանման (681 անգամ)),

*-Արարատի մարզում`* 26.7% (ի հաշիվ քիմիական արդյունաբերության (136.7%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (134.6%), մետաղագործական արդյունաբերության (132.8%), սննդամթերքի, ներառյալ խմիչքները (130.9%) և ծխախոտային արտադրատեսակների արտադրության (114.9%)),

*-Կոտայքի մարզում`* 23.9% (ի հաշիվ ադամանդների (182.6%), մանածագործական և կարի (166.9%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության (119.8%) և մետաղագործական արդյունաբերության (111.4%)),

-*Տավուշի մարզում* 11.8% (ի հաշիվ այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (5.7 անգամ), հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (178.9%), թղթի և ստվարաթղթի (133.0%), բնափայտի մշակման և փայտե արտադրատեսակների (120.7%) և սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրության (108.9%)),

*-Արմավիրի մարզում`* 10.8% (հիմնականում ի հաշիվ էլեկտրաէներգիայի արտադրության (114.7%)),

*-Շիրակի մարզում`*9.9% (ի հաշիվ մանածագործական (3.1 անգամ), հանքագոր-ծական արդյունաբերության այլ ճյուղերի (157.9%), այլ ոչ մետաղական հանքային արտադ-րատեսակների (154.9%) և սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրության (106.4%)),

*-Սյունիքի մարզում*՝ 6.9% (ի հաշիվ այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (3.7անգամ), մանածագործական և կարի (2.6 անգամ), էլեկտրաէներգիայի արտադրության (140.7%) և մետաղե հանքաքարերի արդյունահանման (102.8%)):

Հարկ է նշել, որ Երևան քաղաքի արդյունաբերական կազմակերպությունների կողմից թողարկված արտադրանքի տեսակարար կշիռն արդյունաբերության ընդհանուր ծավալում կազմել է 46.8%: Զգալի են նաև Կոտայքի և Արարատի մարզերում թողարկված արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռները: 2002թ. հունվար-դեկտեմբերին դրանք կազմել են, համապատասխանաբար, 14.1 և 9.4 %:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն
ըստ հանրապետության մարզերի, 2002թ. հունվար-դեկտեմբերին




Արդյունաբերական արտադրանքի արտադրության և իրացման ծավալները,
ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի[1] ,2002թ. հունվար-դեկտեմբերին

| | Կազմակերպությունների քանակը | Արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը, մարդ | Թողարկված արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով, մլն.դրամ | Պատրաստի արտադրանքի իրացումը , ընթացիկ գներով, մլն.դրամ | 2002թ.հունվար-դեկտեմբերի արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2001թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ (համադրելի գներով), % |
|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը ՀՀ** | **1815** | **71809** | **339836.4** | **347100.8** | **114.2** |
| *այդ թվում՝* մինչև 5 մարդ (գերփոքր)[2] | 884 | 2202 | 20398.9 | 20445.0 | 77.1 |
| 6 – 50 մարդ (փոքր) | 649 | 11264 | 66753.0 | 67627.5 | 106.4 |
| 51 – 100 մարդ (միջին) | 100 | 7246 | 18710.4 | 18834.3 | 118.9 |
| 101 և ավելի մարդ (խոշոր) | 182 | 51097 | 233974.1 | 240194.0 | 119.5 |

Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները կազմել են, համապատասխանաբար, 48.7 և 35.8%: Հատկանշական է,որ վիճակագրական մոնիթորին-

---

[1] *Ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, կազմակերպությունների արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունն առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-205):*

[2] *Սույն բաշխվածությունը իրականացված է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն:*

գում ընդգրկված ավելի քան 84% կազմող գերփոքր և փոքր կազմակերպությունները թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 25.6%-ը, այն դեպքում, երբ կազմակերպությունների ընդհանուր քանակում 10% կազմող խոշոր կազմակերպություններին բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի գրեթե 69%-ը:

2002թ. հունվար-դեկտեմբերին արտադրված (հաշվառվող) 111 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 60-ի գծով ծեռք է բերվել կամ գերազանցվել 2001թ.նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի՝ 58–ից 33-ի և սպառողական ապրանքների՝ 53-ից 27-ի գծով:

**Սպառողական ապրանքների արտադրության ծավալները[1]**

*(մլն դրամ)*

| | Փաստացի թողարկումը հունվար-դեկտեմբերին | | Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % |
|---|---|---|---|
| | 2002թ. | 2001թ.[2] | |
| Սպառողական ապրանքներ, ընդամենը | 148298.4 | 140239.9 | 105.7 |
| *այդ թվում՝* | | | |
| պարենային ապրանքներ | 84794.8 | 82907.6 | 102.3 |
| ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը) | 31930.4 | 27304.9 | 116.9 |
| ոչ պարենային ապրանքներ, ընդամենը | 31573.2 | 30027.4 | 105.1 |
| *այդ թվում՝* | | | |
| թեթև արդյունաբերության [3] | 8532.1 | 9673.3 | 88.2 |
| մշակութակենցաղային և տնտեսական նշանակության | 23041.1 | 20354.1 | 113.2 |

Ընդհանուր առմամբ, 2002թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում թողարկվել է 5510.3 մլն.կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2001թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 95.9%-ը: Ընդ որում, ՀէԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 71.3%-ով, ՀԱէԿ-ում՝ 14.9%-ով, իսկ ՋէԿ-երում նվազել 43.7% -ով:

2002թ.հունվար-դեկտեմբերին ՀԱէԿ-ը թողարկել է 2282.2 մլն.կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 41.4%-ը, ՋէԿ-երը, համապատասխանաբար, 1572.0 մլն. կՎտ ժամ և 28.5%-ը, ՀէԿ-երը՝ 1656.1 մլն. կՎտ ժամ և 30.1%-ը: 2002թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում թողարկվել է 369.9 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2001թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 77.6%:

***Սննդամթերք,ներառյալ խմիչքներ և ծխախոտ*** **արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները[4]**

| | 2002 թ. հունվար-դեկտեմբեր | 2001 թ. հունվար-դեկտեմբեր | 2002թ. հունվար-դեկտեմբերը 2001 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Ձկան որս, տոննա | 746.3 | 687.8 | 108.5 |
| Միս[5], տոննա | 39877 | 38362 | 103.2 |
| Երշիկեղեն, տոննա | 1297.7 | 1108.5 | 117.1 |
| Պանիր[1], տոննա | 4812.2 | 4776.6 | 100.7 |
| Պաղպաղակ, տոննա | 1086.5 | 854.0 | 127.2 |

[1] *Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:*

[2] *2001թ.սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2002թ.գներով:*

[3] *Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):*

4 *Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-202):*

5 *Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):*

1 *Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):*

| | 2002 թ. հունվար-դեկտեմբեր | 2001 թ. հունվար-դեկտեմբեր | 2002թ. հունվար-դեկտեմբերը 2001 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) [1], հազ. տոննա | 208.2 | 197.0 | 105.7 |
| Պահածո, հազ. պայմ. բանկա | 53524.3 | 39865.2 | 134.3 |
| Ալյուր, տոննա | 108489 | 113543 | 95.5 |
| Ձավարեղեն, տոննա | 12.0 | 16.0 | 75.0 |
| Հաց և հացամթերք, հազ. տոննա | 294.3 | 298.8 | 98.5 |
| Հրուշակեղեն, տոննա | 3379.5 | 3157.2 | 107.0 |
| Մակարոնեղեն, տոննա | 847.7 | 676.5[◊] | 125.3 |
| Բուսական յուղ, տոննա | 1167.2 | 262.2 | 4.5անգամ |
| Օղի և օղու-լիկյորի արտադրանք , հազ. լիտր | 10598.4 | 9456.2 | 112.1 |
| Կոնյակ, հազ. լիտր | 6144.8 | 5026.0 | 122.3 |
| Խաղողի գինի, հազ. լիտր | 6534.8 | 6392.2 | 102.2 |
| Շամպայն գինի, հազ.լիտր | 621.9 | 582.0 | 106.9 |
| Գարեջուր, հազ. լիտր | 7074.6 | 9974.8 | 70.9 |
| Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր | 28807 | 28646 | 100.6 |
| Հանքային ջրեր, հազ. 0,5 լ շիշ | 36553 | 40247 | 90.8 |
| Աղ, տոննա | 30330 | 28766 | 105.4 |
| Սիգարետներ, մլն.հատ | 2815.1 | 1623.0 | 173.5 |
| Ֆերմենտացված ծխախոտ, տոննա | 851.5 | 940.4 | 90.5 |

*Մանածագործական և կարի* արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

| | 2002 թ. հունվար-դեկտեմբեր | 2001 թ. հունվար-դեկտեմբեր | 2002թ. հունվար-դեկտեմբերը 2001 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Բամբակյա գործվածքներ, հազ. $մ^2$ | 571.9 | 109.9 | 5.2անգամ |
| Բրդյա գործվածքներ, հազ. $մ^2$ | 28.1 | 28.2 | 99.6 |
| Գորգեր և գորգեղեն, հազ. $մ^2$ | 14.9 | 18.2 | 81.9 |
| Գուլպեղեն, հազ. զույգ | 471.8 | 550.9 | 85.6 |
| Տրիկոտաժեղեն, հազ. հատ | 698.1 | 2007.4 | 34.8 |
| Կարի արտադրանք[2] , մլն. դրամ | 8102.0 | 8776.5 | 92.3 |

2002թ.հունվար-դեկտեմբերին *քիմիական* արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից լաքաներկանյութերի արտադրությունը 2001թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 2.4 անգամ, քիմիկա-դեղագործական արտադրանքինը՝ 51.6%-ով, պլաստմասսայից իրերինը՝46.5%-ով, իսկ լվացող և մաքրող միջոցների և սինթետիկ կաուչուկի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար՝ 4.8 և 23.6%-ով:

*Ոչ մետաղական հանքային* արտադրատեսակների արտադրությամբ և *հանքարդյունահանմամբ* զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

| | 2002 թ. հունվար-դեկտեմբեր | 2001 թ. հունվար-դեկտեմբեր | 2002թ. հունվար-դեկտեմբերը 2001 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, $մ^3$ | 25872 | 23110 | 112.0 |
| Ապրանքային բետոն, $մ^3$ | 21836 | 24714 | 88.4 |
| Երեսպատման սալեր բնական քարից, $մ^2$ | 58584 | 60615 | 96.6 |
| Ոչ հանքային շինանյութեր, հազ. $մ^3$ | 236.2 | 150.9 | 156.5 |
| Կիր, տոննա | 4932 | 4901 | 100.6 |
| Ցեմենտ, հազ. տոննա | 354.5 | 276.4 | 128.3 |
| Կլինկեր, հազ. տոննա | 325.8 | 245.5 | 132.7 |
| Գաջ, տոննա | 44828 | 12811 | 3.5անգամ |
| Կանոնավոր կտրվածքի տուֆ, $մ^3$ | 71523 | 51592 | 138.6 |
| Ծակոտկեն լցանյութեր, հազ. $մ^3$ | 104.9 | 45.4 | 2.3անգամ |

2 *Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):*

| | 2002 թ. հունվար-դեկտեմբեր | 2001 թ. հունվար-դեկտեմբեր | 2002թ. հունվար-դեկտեմբերը 2001 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, $մ^2$ | 11967 | 12240 | 97.8 |

*Մետաղագործական* արդյունաբերության կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ալյումինե փայլաթիթեղի արտադրությունն ավելացել է 94.1%-ով, ալյումինե գլանվածքինը՝ 45.6%-ով, պղնձե խտանյութում պղնձինը՝ 5.4%-ով, իսկ կոնվերտորային (սև) պղնձի արտադրությունը նվազել է 7.9%-ով:

### *Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի* արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

| | 2002 թ. հունվար-դեկտեմբեր | 2001 թ. հունվար-դեկտեմբեր | 2002թ. հունվար-դեկտեմ-բերը 2001 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Մետաղահատ հաստոցներ, հատ | 287 | 135 | 2.1անգամ |
| Ռելեներ, հազ. հատ | 345.3 | 323.9 | 106.6 |
| Ուժային ճկուն կաբելներ, կմ | 4.3 | 13.3 | 32.3 |
| Ուժային կաբելներ մինչև 1կՎ լարման համար, կմ | 37.1 | 584.0 | 6.4 |
| Ռետինապատված հաղորդալարեր, կմ | 79.2 | 886.0 | 8.9 |
| Տեղակայման հաղորդալարեր, կմ | 718.7 | 4643.7 | 15.5 |
| Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ | 6613.8 | 7403.1 | 89.3 |
| Պոմպեր, հատ | 529 | 2015 | 26.3 |
| Ճնշակներ, հատ | - | 19 | - |
| Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ | 2458 | 3058 | 80.4 |
| 63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ | 437 | 116 | 3.8անգամ |
| 0.5-100 կվտ հզորության փ/հ գեներատորներ,հատ | 50 | - | - |
| Շարժական էլեկտրակայաններ, հատ | 1 | 40 | 2.5 |
| Ուժային տրանսֆորմատորներ, հատ | 34 | 6 | 5.7անգամ |
| Ավտոմեքենաներ, հատ | 11 | 22 | 50.0 |
| Ջրային հաշվիչներ, հատ | 1453 | 171 | 8.5անգամ |